նադրեցան Եպիսկոպոս յԵփրեմ Կաթուղիկոսէ։ Այլ Աբրահամ Պատրիարք և Փոխանորդ Պողոս եպիսկոպոս խորհրդով ազգին գրեցին առ Կաթուղիկոսն, պահել զԴիոնէսիոս եպիսկոպոս անդ յԷջմիածին 'ի խնամս իւր, մինչեւ կաղմեսցի ժողով 'ի Կոստանդինուպոլիս վասն օգտի Աթոռոյն Երուսաղէմի, և ապա սահմանեսցի գնալ նորա յԵրուսաղէմ։ իսկ Սիմէոն և Կարապետ եպիսկոպոսունք մեկնեցան անտի (29 Սեպտեմբերի) և հասեալ 'ի Կարին դէմ եդին գնալ ուղղակի յԵրուսաղէմ։ լուեալ զայս Պողոսի գրեաց 'ի Բերիա, 'ի հասանիլ գրոյն առանց զայլ և այլ խորհելոյ դարձուսցեն զընթացս իւրեանց 'ի Կոստանդինուպոլիս, և մի բամբասեսցին իբրեւ զանհնազանդս, ապա թէ ոչ՝ բռնադատին գալ յԵրուսաղէմ։ Գաբրիէլ եպիսկոպոս յանձն արարեալ զպաշտօն Նուիրակութեան Զմիւռնիոյ Յակոբ վարդապետի՝ գնաց յԵրուսաղէմ վարել զպաշտօն Փոխանորդութեան։ զի նախորդ նորին Ստեփաննոս եպիսկոպոս Եւդոկիացի, Աղ կոչեցեալ՝ վախճանեալ էր 1815։ 'ի 19 Մայիսի։ Մկրտիչ եպիսկոպոս մեղրիկ ոչ կամեցաւ մեկնիլ 'ի Տփխիսէ եւ երթալ 'ի կոչն, պատճառելով զգործ Նուիրակութեան իւրոյ։ և յԵրուսաղէմ Մարկոս և Յարութիւն եպիսկոպոսունք ոչ կամեցան գնալ։ և կամ Թէոդորոս Պատրիարք ոչ եթող զնոսա, այլ առաքեցին միայն զԹարգման Աւետիսն։ և նորա հասեալ անդ անկաւ 'ի մահիճս ծանր հիւանդութեամբ, եւ չգըտեալ դարման 'ի բժշկաց՝ վախճանեցաւ։

Պողոս եպիսկոպոս ընկալեալ զտուփար պարտուց Աթոռոյն զոր բերեալ էր Թարգմանն, խնդրէր նաեւ զտուփար եկամտից և եկեղեցական զարդուց, ցուցանել ազգին 'ի դէպ ժամանակի, և զայրանայր 'ի վերայ այնոցիկ որք արհամարհեցին զհրաւէր նորին և ոչ կամեցան գնալ 'ի քաղաք անդր, որոց վասն ստիպմամբ և բազում յորդորանօք և երբեմն եւս սպառնալեօք գրեաց երկար առ Թէոդորոս փութանակի առաքել զնոսա առ 'ի տնօրինել նոքօք զօգուտ Աթոռոյն։ Յայսպիսի ծանրաստաղտուկ գործս և 'ի խնդիրս ընկեցին 'ի Պատրիարքութենէ զԱբրահամ Եպիսկոպոս Մէլիքեան, և 'ի տեղի նորա ընտրեցին զՓոխանորդն Երուսաղէմի զԱգրիանուպոլսեցի Պողոս Արք Եպիսկո-